ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 290 -Ա

09 հունիս 2026թ.

ք.Արտաշատ

«ՄԱՍԻՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 08.05.2026 թ. N 01/30.3/3/3265-2026 գրությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

2026 թվականի ապրիլի 9-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը /այսուհետ՝ Տեսչական մարմին/, ուսումնասիրելով «shamshyan.com» լրատվական կայքում հրապարակված հոդվածը՝ կապված Մասիս քաղաքի աղբավայրի հետ, հարուցել է վարչական վարույթ, որի շրջանակներում «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի /այուհետ՝ Ընկերություն/ տնօրեն Ֆելիքս Պողոսյանի կողմից տրված հայտարարությունում նշվել է, որ հրդեհը հավանաբար տեղի է ունեցել ինքնահրկիզման արդյունքում: Մասիս համայնքում գտնվող աղբանողը շահագործվում է Ընկերության կողմից:

ՀՀ Արարատի մարզպետին հասցեագրված նյութերի հիման վրա ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմում /այսուհետ՝ Աշխատակազմ/ մարզպետի 2026 թվականի մայիսի 13-ի թիվ 181-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի շրջանակում Ընկերության տնօրեն Ֆ. Պողոսյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: 02.06.2026 թ. Աշխատակազմի իրավաբանական բաժնում հրավիրվել է վարչական լսումներ, որին մասնակցել է Ֆ. Պողոսյանը:

Վարչական ակտն ընդունելու հիմանավորումը.

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 219₁-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ «Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 8.2-րդ, 9-րդ, 10.5-րդ և **10.6-րդ** մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը»:

Օրենսգրքի 43.1-րդ հոդածի 10.6-րդ մասի համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով աղբավայրի հսկողություն, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում աղբավայրը շահագործողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Աղբավայրերը շահագործող օպերատորները շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և կանխարգելման նպատակով իրականացնում են աղբավայրի հսկողություն, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ աղբի ինքնայրումը կանխելու համար»:

Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդածի 10.6-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն Ֆելիքս Պողոսյանի նկատմամբ կիրառել տուգանք՝ 80.000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ միասնական

գանձապետական հաշվի եկամտային մասում գործող՝ «Արարատի մարզպետի աշխատակազմի կողմից կիրառվող տուգանքներ և պատջամիջոցներ» 900005242947 հաշվեհամարին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ՀՀ Արարատի մարզպետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 283-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված)՝ որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6/9/2026

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ